ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

N << *ՀՀՏՄ-ԷԱՃԾՁԲ-23/2*>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 13 >> փետրվարի 2023թ.

Ժամը 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Ա. Բաբլումյան

Անդամներ՝

ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Ռ. Տիգրանյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Մ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա.Մանգասարյան

1. << *ՀՀՏՄ-ԷԱՃԾՁԲ-23/2*>> ծածկագրով **«Ներքին աուդիտի ծառայությունների»** ձեռքբերման մրցույթի հայտերը բացվել են էլեկտրոնային աճուրդի համակարգով 13.02.2023թ. ժամը 10:30-ին:

2. Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Մասնակիցների անվանումները	Նախահաշվային գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ , ՀՎՀՀ 02618043	10000000 AMD	2000000 AMD	20 %	2400000.00 AMD
1	2	ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ , ՀՎՀՀ 00131856	10000000 AMD	2800000 AMD	20 %	3360000.00 AMD
1	3	ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ ՓԲԸ , ՀՎՀՀ 04113698	10000000 AMD	4930000 AMD	20 %	5916000.00 AMD
1	4	ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ , ՀՎՀՀ 08410295	10000000 AMD	6860000 AMD	20 %	8232000.00 AMD
1	5	ՕՐԵՆՔ ԵՎ ԿԱՐԳ ՍՊԸ , ՀՎՀՀ 00842709	10000000 AMD	8300000 AMD	20 %	9960000.00 AMD

3. Գնահատման արդյունքում պարզվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերից բացակայում են հրավերով պահանջվող աուդիտի միավորների գնային առաջարկ փաստաթուղթը և իրական շահառուների տվյալները, որոնք Հրավերով պահանջվել է: Նշյալ փաստաթղթերը պետք է ներկայացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված տարբերակով՝ կցելով դրանք աճուրդի համակարգում:

4. Հանձնաժողովի նիստը կասեցվում է մեկ աշխատանքային օրով և Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին առաջարկվում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ ներկայացնելով բացակա փաստաթղթերը:

5. Եթե վերոնշյալ ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

6. Հաջորդ նիստը կկայանա մեկ աշխատանքային օր հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Բաբլումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Տիգրանյան

Մ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան